




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՎՃԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՎՃԱՐԱԿԱՆ

ISSN 1829-0280

# ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎՃԱՐԱԿԱՆԻ



**ВЕСТНИК**

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

**MESSENGER**


OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2022 [1]  
ԵՐԵՎԱՆ



## ՎՈՂՈՂՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,  
աշխարհագրական գիտությունների թեկնածու

 <https://orcid.org/0000-0003-0435-6947>

## ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ԴՐԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել են հանրապետության տնտեսության ագրարային հատվածի հիմնավորված տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման վրա զգալի չափով ազդեցություն գործող բնական ու տնտեսական պայմանների մեծ բազմազանությունը, բազմաճյուղ տնտեսության տարածական զարգացումը, բազմաթիվ մակրոտնտեսական գործոններ: Այս համատեքստում գյուղատնտեսության և գյուղական տարածքների հեռագա զարգացումը ֆինանսական աջակցության տեսակետից հնարավոր է միայն պետության բյուջեից քաղաքականության արմատական փոփոխությունից, պետական և մասնավոր գործընկերության զարգացման միջոցով այդ հարցերի առավել արդյունավետ կարգավորումից հետո: Ցավոք, գյուղական տարածքներում առայժմ ժողովրդագրական վիճակի վատթարացման գործընթացներն են գերակշռում, որոնց մասին են վկայում գյուղական բնակչության թվի նվազման և գյուղական լքյալ բնակավայրերի ավելացման մասին տվյալները: Իրադրությունը բարդանում է հատկապես այն հանգամանքով, որ հանրապետության տարածքային համաչափ զարգացմանը վերաբերող՝ վերջին ժամանակահատվածում ընդունված ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն փաստաթղթերում ագրարային հատվածի և հարակից ճյուղերի տեղաբաշխման ու մասնագիտացման հարցերին պատշաճ ուշադրություն չի դարձվել: Եթե ժամանակին ագրոպարենային համակարգի երրորդ ոլորտի վերամշակող ճյուղերի զարգացման, ԵԱՏՄ անդամ երկրների ագրոպարենային արտադրության հիմնավորված տեղաբաշխման ու մասնագիտացման խորացման համարել համաձայնեցված գործողությունների հաշ-

վառամբ ագրարային հատվածի տարածքային կազմակերպման հայեցակարգի, ռազմավարության և զարգացման ծրագրերի մշակման նպատակով միջոցներ չձեռնարկվեն, դժվար է ակնկալել ճյուղի և գյուղական տարածքների համաչափ զարգացում:

**Հիմնաբառեր.** *հիմնավորված տեղաբաշխում, գոտիական մասնագիտացում, տարածքային համաչափ զարգացում, ագրարային հատված, գյուղական տարածքներ, ռազմավարություն, պեդակական աջակցություն*

JEL: Q15, R12

DOI: 10.52174/1829-0280\_2022.1-114

**Ներածություն:** Հայաստանի լեռնային տարածքի, բնական պայմանների, ագրոարտադրական ռեսուրսային ներուժի ընձեռած հնարավորությունների, ինչպես նաև աշխարհագրական դիրքի ու տարածաշրջանային աշխարհաքաղաքական սահմանափակումների առանձնահատկություններն իրենց կնիքն են թողել հանրապետության ամբողջ տնտեսության՝ նախևառաջ ագրարային հատվածի տեղաբաշխման ու գոտիական մասնագիտացման վրա: Բնատնտեսական օրինաչափությունների բացահայտումը և դրանց առանձին բաղադրատարրերի փոխազդեցության բազմաբնույթ ուղղությունների մանրամասն ու համակողմանի ուսումնասիրությունը արդիական ու կարևոր են տարածքային համաչափ զարգացման առումով, քանի որ վճռական ներգործություն են ունենում հանրապետության արտադրական կառուցվածքի ձևավորման հիմնական ուղղությունների վրա՝ ձևավորելով տնտեսության բազմաճյուղայնությունն ընդհանրապես և ագրարային հատվածի գոտիական մասնագիտացումը՝ մասնավորապես:

Այս համատեքստում տնտեսության ագրարային հատվածը պետք է քննության առնել ոչ միայն և ոչ այնքան որպես տնտեսության հիմնական ճյուղ, այլ որպես հանրապետության բնակչության զգալի՝ մեկ երրորդից ավելի մասի առանձնահատուկ կեցության հիմք, քանի որ գյուղական բնակչությունը ոչ միայն պահպանում ու բազմապատկում է արտադրական փորձը և էթնոմշակութային ավանդույթները, այլև լեռնային համեմատաբար փոքր ու անհավասարաչափ բնակեցված տարածքի նկատմամբ սոցիալական և վարչական հսկողություն է ապահովում:

Հետևաբար՝ ՀՀ-ում տնտեսության ագրարային հատվածի համաչափ զարգացմանը միտված պետական քաղաքականությունը, նախևառաջ, պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական արտադրության հիմնավորված տեղաբաշխմանն ու գոտիական մասնագիտացման խնդիրների ուսումնասիրմանը, դրանց լուծման տարբերակների մշակմանը, որոնք կարևոր են թե՛ ճյուղի արդիականացմանն ու տնտեսական աճի ապահովման, թե՛ ձեռնարկատիրական միջավայրում ազատ մրցակցային հարաբերությունների ձևավորման տեսակետից:

**Գրականության ակնարկ:** Տնտեսության ագրարային հատվածի տեղաբաշխման և մասնագիտացման տեսական ու գործնական հիմնախնդիրներին անդրադարձել են հայրենական և արտասահմանյան շատ հեղինակներ: Քանի որ մասնագիտացումն ու տեղաբաշխումն ինքնին բավական լայն ընդգրկում ունեցող ու բազմաշերտ հասկացություններ են, ուստի, հետազոտությունների ընթացքում թեմայի արդիականությունից, նպատակներից ու

խնդիրներից ելնելով, կարևորվել է որոշակի հիմնախնդրի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Դեռևս Ա.Մարշալն իր «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխատության մեջ ընդգծել է շուկայի տեղաբաշխման գործոնի նշանակությունը տնտեսական գործունեության համար. «Եթե .... երկու արտադրողներ ունեն միանման բարենպաստ պայմաններ..., ապա.... ստացվող դրամական արժեքներն ավելի շատ տեղադիրքի առավելությունն են.... (situation vague)»<sup>1</sup>:

Գյուղատնտեսական արտադրության հիմնավորված տեղաբաշխման մոդելին մոտ առաջին սխեման կազմել է գերմանացի տնտեսագետ Ի. Տյունենն իր «Մեկուսացված պետություն» աշխատությունում, որտեղ, ըստ էության, ստեղծել է գյուղատնտեսական մթերքների սպառման (շուկայի) կենտրոնի շուրջ գյուղատնտեսության տարածքային տեղաբաշխման համակարգի մոդելը: Ըստ Տյունենի մոդելի՝ շուկայի (վերացական «մեկուսացված պետության») հեռավորությունից կախված, փոփոխվում են հողերի օգտագործման եղանակները, դրա հետ նաև՝ ագրարային հատվածի վարման համակարգը: Մաթեմատիկական տեսանկյունից լուծվել է հողերի օգտագործումից եկամուտն առավելագույնի հասցնելու խնդիրը՝ շուկայից փոփոխվող հեռավորության դեպքում<sup>1</sup>:

Տնտեսագիտության դասականներից Կ. Մարքսը աշխատանքի տարածաճյուղային բաժանման հասկացության առնչությամբ նշել է. «Աշխատանքի տարածքային բաժանումը, որն արտադրության առանձին ճյուղերն ամրակցում է երկրի առանձին շրջաններին, նոր զարկ է ստանում....»<sup>2</sup>, ապա հավելել՝ «Ոչ թե հողի բացարձակ բերրիությունը, այլ դրա բաժանվածությունը տարբեր տեսակների, դրա բնական արդյունքների բազմազանությունն են կազմում աշխատանքի բաժանման բնական հիմքը»<sup>3</sup>:

1990-ական թվականներին հետխորհրդային մի շարք երկրներում, այդ թվում ՀՀ-ում, բարեփոխումները, տնտեսության վարման, եկամուտների, ինտենսիվության մակարդակի առումով, շուկայական անկազմակերպ միջավայրի պայմաններում ուղեկցվում էին գյուղատնտեսական արտադրության էլ ավելի մեծ տարածքային տարբերակմամբ, գյուղացիների կողմից իրենց արտադրանքի վաճառքի ընթացքում անմիջական «կանխավ զիջումներով» և այլն: Պետությունը համարում էր, որ շուկան է որոշում ամեն ինչ: Սակայն դա խիստ անլուրջ վերաբերմունք առաջ բերեց<sup>4</sup>: Տարածքային զարգացման խնդրի վերաբերյալ համապատասխան դրույթներ արտացոլվել են նաև տվյալ ժամանակահատվածում ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի կարևորագույն փաստաթղթում, ինչպիսին է ՀՀ Կառավարության 2011 թ. հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրության 38-րդ կետով հավանության արժանացած «Տարածքային զարգացման հայեցակարգը»: Տարածքային զարգացման բնագավառում իրականացվելիք հիմնական միջոցառում-

<sup>1</sup> Marshall A., Principles of Economics. London, 1910, p. 441.

<sup>2</sup> Ст'ю Саушкин Ю.Г., Экономическая география: история, теория, методы, практика. М.: Мысль, 1973, էջ 62-63:

<sup>3</sup> Маркс К., Капитал. Критика политической экономии. Т. 1, кн. 1, Процесс производства капитала. М.: Политиздат, 1988, с. 366.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 522:

<sup>5</sup> Ст'ю Карпачев С., Гектары оптимизма. Устраняясь от поддержки сельхозпроизводителей, государство плодит перекупщиков // Военнопромышленный курьер ВПК, N2, 2020, էջ 5:

ներն ամրագրված են ՀՀ Կառավարության 2012 թ. փետրվարի 2-ի նիստի N 135-Ն որոշմամբ հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգով նախատեսված տարածքային զարգացման միջոցառումների ծրագրերը հաստատելու մասին» փաստաթղթում: ՀՀ Կառավարությունը 2016 թ. հուլիսի 29-ին ընդունեց նաև Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության N 29-24 արձանագրային որոշումը<sup>5</sup>: Վերոհիշյալ փաստաթղթերում ներկայացված են տնտեսության տարբեր ոլորտների գերակայությունները և տնտեսությունների ու գյուղական բնակչության եկամտի աղբյուրների բազմազանեցման, ձեռներեցության խթանման, կենսապայմանների բարելավման ու բարեկեցության, ինչպես նաև զբաղվածության մակարդակի բարձրացման միտումները: Հաշվի առնելով տնտեսական աճի ապահովման նպատակով արվող ներդրումները՝ Հայաստանի զարգացման ռազմավարության առաջնային ոլորտներն ու ուղղություններն ընդգրկեցին արդյունաբերության ու արտահանման խթանումը, զբոսաշրջության, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների զարգացումը, փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվող աջակցությունը:

Բացի դրանից, հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերով ՀՀ Կառավարության կողմից որդեգրվել է մի շարք ոլորտների, այդ թվում՝ գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման, բարեփոխումների իրականացման քաղաքականություն: Մասնավորապես՝ «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն» և «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն» փաստաթղթերում նախանշվում են ագրարային քաղաքականության հիմնական նպատակներն ու դրանց իրականացումն ապահովող միջոցառումները<sup>6</sup>: Ռազմավարությամբ սահմանվում են նաև տնտեսության ագրարային հատվածի գերակայությունները և նախընտրելի մասնագիտացումն ու հիմնավորված տեղաբաշխումը, որոնք պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների համար կարող են լինել առավել նպատակամետ գործունեության ուղենիշեր:

Մարզերի սոցիալ-տնտեսական անհամաչափության պատճառների պարզաբանման, համակողմանի վերլուծության տեսանկյունից արժեքավոր է 2015 թվականին ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի լույս ընծայած

<sup>5</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգով նախատեսված տարածքային զարգացման միջոցառումների ծրագրերը կատարելու մասին: Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N9 (883), 22 փետրվարի 2012, էջ 8-12, <https://www.e-gov.am/u.files/decrees/arc.Voroshum/2016/07ardzanagrajin Nrg 064.pdf>

<sup>6</sup> Տե՛ս «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 4 նոյեմբերի 2010 թվականի N 1476-Ն որոշումը: Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N60 (794), 1 դեկտեմբերի 2010, էջ 66-143, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն, <http://mineconomy.am/page 1467>:

«ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները» աշխատանքը<sup>7</sup>: Գիտական աշխատության մեջ քննարկվում են ՀՀ տնտեսական տարածքների (մարզերի) սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափության պատճառները, գնահատվում են տարածքների կառավարման ինստիտուցիոնալ հիմքերը, ինչպես նաև հանրապետության տարածքային զարգացման հիմնախնդիրները գործարար միջավայրի և գյուղացիական տնտեսությունների վարման պայմանների համատեքստում: Հետազոտական կենտրոնը մշակել է նաև մեր հանրապետության «Տարածքային զարգացման մոդելը»:

Այդուհանդերձ, պետք է ընդգծել, որ շուկայական տնտեսավարման պայմաններում հանրապետության ագրարային հատվածի հիմնավորված տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման հիմնախնդրի քննությունն ու հանգամանալից վերլուծությունը նոր մեթոդաբանության և հայեցակարգի մշակման անհրաժեշտություն են առաջադրում, որը բխում է Հայաստանի համեմատաբար փոքր և անհավասարաչափ բնակեցված լեռնային տարածքի համաչափ զարգացման ռազմավարական կարևորությունից: Հետևաբար՝ փոխհամաձայնեցված ազգային առաջնահերթությունների նորովի ուսումնասիրությունը պահանջում է համարժեք, որակապես նոր մոտեցումներ և տեսամեթոդական ու կիրառական նշանակություն ունեցող հիմքերի մշակում:

Բացի դրանից, բարձր գին և շուկայահանման հնարավորություններ ունեցող գյուղատնտեսական մթերքների արտադրության տեղաբաշխմանը և մասնագիտացման խորացմանը նպաստող բնակլիմայական պայմանների ու ագրոարտադրական ռեսուրսային ներուժի ընձեռած հնարավորությունների ամբողջական գնահատումն ու էկոլոգատնտեսական առումով հիմնավորված օգտագործումը պայմանավորելու են հանրապետության գյուղատնտեսական արտադրության տարածքային կազմակերպման կատարելագործման և դրա արդյունավետության մակարդակի բարձրացման օրինաչափ պահանջը:

Հետևաբար՝ սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել գնահատելու ՀՀ լեռնային տարածքի ագրարային հատվածի հիմնավորված տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման տարողություն ունեցող հարցերը, ինչպես նաև ներկայացվելու են որոշակի եզրահանգումներ, որոնք կարող են գիտագործնական նշանակություն ունենալ հանրապետության տարածքային համաչափ զարգացման գործընթացին որոշակի ուղղություն և թափ հաղորդելու առումով:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Տարածքային համաչափ զարգացման համատեքստում տնտեսության ագրարային հատվածի տեղաբաշխման և մասնագիտացման հիմնախնդրի լիարժեք ու համապարփակ գնահատումը, միտումների վերլուծությունը և կանխատեսումներն ամենևին պարզ խնդիրներ չեն և պահանջում են զարգացած մեթոդական շրջանակի և գործիքակազմի կիրառում: Հետևաբար՝ հանրապետության տնտեսության ագրարային հատվածի տեղաբաշխմանը և մասնագիտացմանը նպաստող բնատնտեսական և ագրոէկոլոգիական բնութագրիչների գիտական նկարագրությունն ու գնահատականը նախանշելու համար հետազոտության ընթացքում

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները / Զ. Թաղևոսյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2015, էջ 3-140 («Ամբերդ» մատենաշար):

օգտագործվել են վիճակագրական ու տրամաբանական, համեմատական ու գործոնային վերլուծությունների, ծրագրանպատակային մոտեցումների, գիտական վերացարկման և այլ մեթոդներ: Հոդվածի տեղեկատվական հիմքը ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հրատարակված վերլուծական տեղեկատվական և հարցում-հետազոտական նյութերն են, որոնք, ընդհանուր առմամբ, բնութագրում են մարզերի գյուղատնտեսության մասնագիտացման մակարդակը և գյուղական բնակչության շարժունության արդի միտումները:

Հետազոտության նախընտրելի մեթոդների կիրառությունը պայմանավորված է հանրապետության ագրարային հատվածի առանձին ճյուղերի ու ենթաճյուղերի հիմնավորված տեղաբաշխման և տարբեր գոտիներում մասնագիտացման խորացման ծրագրերի իրականացման տարբերակված մոտեցումների կիրառման անհրաժեշտությամբ: Բացի դրանից, այս կամ այն մեթոդին նախապատվություն տալը հիմնավորվում է հանրապետության տարածքային առանձնահատկությունների և ագրոկլիմայական պայմանների հետևանքով ստեղծված բնական գործընթացների ու երևույթների դրական ու բացասական կողմերի մանրամասն պարզաբանման և դրանց ագրոարտադրական գնահատման հիման վրա տարածքի գյուղատնտեսական նպատակներով յուրացման խելամիտ ծրագիր մշակելու կարևորությամբ:

**Վերլուծություն:** Տնտեսավարման շուկայական մեխանիզմի պայմաններում մի կողմից՝ հանրապետության ցածրադիր գոտու համեմատաբար սահմանափակ տարածքի վրա տնտեսական գործունեության ինտենսիվացումը զգալիորեն բարձրացավ, մյուս կողմից՝ ոչ միայն սահմանամերձ, լեռնային ու բարձրլեռնային գոտիներում, այլև նույնիսկ նախալեռնային գոտու որոշ մարզերում ու տարածաշրջաններում տնտեսավարման և բնակչության խտության էական նվազեցում տեղի ունեցավ, որը գրեթե ամենուրեք համայնքների, հատկապես՝ գյուղական, ընդհանուր քանակի կրճատմանը հանգեցրեց: Այսպես՝ 1995 թ. վարչատարածքային բարեփոխումներից հետո փոքր քաղաք դառնալու հնարավորություններ չունեցող 6 քաղաքային բնակավայրեր (Անիպեզմա, Արագած, Ազատամուտ, Նոր Խարբերդ, Լուսակերտ և Գագարին) գյուղի կարգավիճակ են ստացել, իսկ գյուղական համայնքների ու բնակավայրերի թիվը գրեթե 27 միավորով պակասել է: Ընդ որում, տարածքային-տնտեսական համակարգերի զարգացման տարեցտարի ավելի մեծ արագությամբ բևեռացումը որոշ բնատնտեսական շրջանների խոշոր քաղաքներում ուղեկցվել է դրանց համակենտրոնացմամբ: Օրինակ՝ Արարատյան բնատնտեսական շրջանի տարածքում համակենտրոնացման տեսակետից խնդրահարույց է Երևանի արդյունաբերական (տնտեսական) հանգույցի զարգացումը: Դա հանրապետության տարածքի 0,7%-ն է զբաղեցնում, բայց նրան բաժին է ընկնում բնակչության 34,4%-ը և ամբողջական համախառն արդյունքի 54,1%-ը<sup>8</sup>:

Թեև տնտեսության ագրարային հատվածի զարգացումը կանխորոշող հիմնական գործոնը դեռևս բնակլիմայական պայմաններ են մնացել, այնուամենայնիվ, շատ դեպքերում հանրապետության տարածքում ագրարային հատվածի և դրա առանձին ենթաճյուղերի վարման գերիշխող և լրացնող

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի, <https://www.armstat/file/article/marzer-2020-pdf>, էջ 30:

տիպերի համեմատաբար կայուն զուգակցումը բնորոշող սոցիալ-տնտեսական և բնակլիմայական գործոնների փոխազդեցության խախտում է տեղի ունեցել: Արդյունքում՝ ագրարային հատվածի հիմնավորված տարածքային զարգացման հետ կապված գործընթացները զգալիորեն դանդաղել են, իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործունե աջակցության բացակայության պարագայում դրանք հիմնականում ներմարզային ու մարզային մակարդակներում տարերային և գործնականորեն անկառավարելի բնույթ են ձեռք բերել: Ուստի, սակավաթիվ մարզերում, չնայած ագրարային հատվածի տարածքային կազմակերպման մեջ առանձին դրական տեղաշարժերին, երբ վերջին ժամանակահատվածում սկսել են մեծ չափով հաշվի առնել հանրապետության տարածքի ագրոարտադրական ռեսուրսային ներուժի ընձեռած հնարավորությունները, այնուհանդերձ, դրա տեղաբաշխումը և մասնագիտացումը ոչ ամբողջությամբ են համապատասխանում ճյուղի տարածքային համաչափ զարգացման քաղաքականության, տարբեր մարզերում գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտադրության մասնագիտացման, առաջնահերթ անհրաժեշտության պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման և վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ու սուբվենցիոն ծրագրերի իրականացման պահանջներին:

Տնտեսության ագրարային հատվածի տարածքային զարգացման ձևավորված բազմամյա հիմնախնդիրները և անհամամասնությունները գործնականում արտահայտություն են գտել հանրապետության մարզերի ու տարածաշրջանների մեծամասնությունում: Առավելապես տարերային կերպով տարածքային ինքնակազմակերպումը հիմնականում դրսևորվում է որպես հանրապետության գյուղական տարածքների զգալի մասում տարածքային լքվածության և տնտեսական վատթարացման ուղղություններով տեղաշարժ հատկապես սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային գոտիներում տեղակայված գյուղական համայնքներում ու բնակավայրերում: Հետևաբար՝ տնտեսության ագրարային հատվածի տարածքային զարգացման կանխատեսման և գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտադրության գծով հիմնավորված տեղաբաշխման ու տարբեր գոտիներում նախընտրելի մասնագիտացման ուղղությունների ընդհանուր ծրագրեր մշակելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ճյուղի տարածքային կազմակերպման ձևավորված համամասնությունները, այլև մեծ շարժունությունը: Դա պայմանավորված է ձևավորող գործոնների մեծամասնության երկարաժամկետ բնույթով, քանի որ սովորության ուժը շարունակելու է դարձյալ դեպի հյուսիսի և արևմուտքի ուղղությամբ համամասնությունները «տեղաշարժել», որը ոչ միայն միջնաժամկետ, այլև, հնարավոր է, նույնիսկ երկարաժամկետ հեռանկարում իրավիճակի արմատական փոփոխության ոչ մեծ հավանականություն է կանխորոշում:

Հաշվի առնելով հանրապետության տարածքային առանձնահատկությունների և, մասնավորապես, մակերևույթի խիստ մասնատվածության հետևանքով մատակարարման լոգիստիկ հանգույցները սահմանափակող գյուղական և գյուղատնտեսական թույլ զարգացած ենթակառուցվածքների վիճակը՝ տնտեսության ագրարային հատվածի տարածքային զարգացումը կողմնորոշվելու է ըստ երկարաժամկետ հեռանկարի, այդ թվում՝ այս կամ այն տարածքն ամեն կերպ «ձեռքից բաց չթողնելու» խնդիրը իրագործելու



համար այնտեղ ունենալ մինչև անգամ մի ինչ-որ քանակի կազմի բնակչություն: Հասկանալի է, որ նման պայմաններում գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը և մասնագիտացումը կապված են մեծ դժվարությունների և ծախսերի հետ: Դրա հետևանքով սահմանափակ են դառնում նաև գյուղական բնակավայրերի զարգացման հնարավորությունները: Այդպիսի տարածքներում գյուղերը համեմատաբար փոքր չափերի են (ընդհուպ ագարակային տիպի գյուղակներ): Ուստի, նախևառաջ պետությունը, ազգային առաջնահերթություններին համապատասխան, շահագրգռվածություն պետք է հանդես բերի հանրապետության ագրո- և կենսաբազմազանությունը պահպանելու, ագրոարտադրական ու աշխատանքային ռեսուրսները հիմնավորված օգտագործելու, գյուղական տարածքները բարեկարգելու նկատմամբ, որը տնտեսության ագրարային հատվածի բազմազանեցման ու մրցունակության բարելավման պայմաններում տարեցտարի ավելի ու ավելի այնպիսի տարածքի է վերածվելու, որտեղ ագրարային տնտեսություն վարելու հետ մեկտեղ բնական և մշակութային ժառանգությունը հսկայական ներուժ է ստեղծում գյուղական տարածքներում ագրո- և էկոլոգոսաշրջության, գյուղական փոքր և միկրոկազմակերպությունների զարգացման ու, դրանց հետ կապված, զբաղվածության հնարավորությունների ստեղծման համար: Վերջիններս նպաստելու են ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու էկոլոգիական առումով ավելի լավ տարածքային հաշվեկշռի ձեռքբերմանը գյուղացիական տնտեսությունների և տնտեսավարման այլ ձևերի եկամուտներն ավելացնելու միջոցով<sup>9</sup>: Այսպես օրինակ՝ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի Նորշեն (Խարկով) բնակավայրը տարիներ շարունակ լքված գյուղ է, բայց, ենթադրվում է, որ կարող է էկոլոգոսաշրջության ուշագրավ կենտրոն դառնալ, քանի որ հենց այստեղից է պատմական Անին պարզորոշ երևում: Դա անհրաժեշտ է հաշվի առնել տեղաբաշխման և մասնագիտացման, նախևառաջ՝ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները մշակելու դեպքում:

Միաժամանակ, հանրապետության գյուղական տարածքների մեծամասնության համար տնտեսության ագրարային հատվածի զարգացումը եղել է, կա և կմնա գերակա խնդիր, հակառակ այն բանի, որ լեռնային գոտու շատ տարածաշրջաններ, ճյուղի վարման համար համեմատաբար անբարենպաստ ագրոկլիմայական պայմանների հետ միասին, գյուղական տարածքների թույլ օջախային յուրացում ունեն: Այդ մարզերը (Սյունիք, Վայոց ձոր, Գեղարքունիք և Տավուշ), հանրապետության գյուղական տարածքների համաչափ զարգացման ռազմավարության դասակարգման համաձայն (ըստ N UTS1-3 մեթոդաբանության), *չորրորդ շրջան* տիպին են պատկանում, և, տարածքային առանձնահատկություններով ու ագրոկլիմայական պայմաններով պայմանավորված, գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է տարբեր չափեր ու կողմնադրություն ունեցող հողատեսքերի վրա ու

<sup>9</sup> Այս համատեքստում ագրոլոգոսաշրջության զարգացումը գյուղական տարածքներում կյանքի աշխուժացման, համեմատաբար փոքր ներդրումներով եկամտաբեր ձեռնարկատիրության զարգացման և մարզերի ու տարածաշրջանների զբոսաշրջային ռեսուրսների առավել հիմնավորված օգտագործելու համար առանձնահատուկ կարևորության ունի: (Տե՛ս **Զ. Թաղևադյան, Ա. Հայրապետյան**, Շիրակի մարզի համայնքային հիմնախնդիրների առաջնային հետազոտության արդյունքների վերլուծություն, «Բանբեր ՀՊՏՀ», N2, 2020, էջ 59-60):

բազմաբնույթ ուղղություններով, ինչը լրացուցիչ ծախսեր և ջանքեր է պահանջում<sup>10</sup>:

ՀՀ-ում բնակչության ընթացիկ հաշվառման արդյունքների համաձայն՝ 2020 թ. 956 գյուղական համայնքներից ու բնակավայրերից 35-ը մշտական բնակչություն չունեն, իսկ 176-ում բնակչության թիվը մինչև 200 մարդ է: Օրինակ՝ Սյունիքի մարզում 11, Վայոց Ձորում 7, Շիրակում 5, Գեղարքունիքում 4, Տավուշում 3, Լոռիում 2, Արագածոտնում 2, Արարատում 1 գյուղ դատարկ են մնացել: Բացի դրանից, հանրապետությունում առկա են 20347 անձնական օժանդակ և քաղաքացիների այլ անհատական տնտեսություններ՝ լրջալ հողամասերով և տնամերձով տներով (աղյուսակ 1): Ընդհանուր քանակում այդպիսի տնտեսությունների տեսակարար կշիռը հատկապես մեծ է Լոռու (22,6%), Վայոց ձորի (18,0%), Կոտայքի (12,7%), Տավուշի (10,7%) և Շիրակի (8,0%) մարզերում: Հետևաբար՝ միանգամայն հասկանալի է, որ ամբողջ հանրապետության գյուղական բնակչության գրեթե 1/3-ը, ներառյալ տնտեսապես ակտիվ և մասնագիտություն ունեցող երիտասարդության կեսը, առավելապես կողմնորոշված են դեպի քաղաքային ապրելակերպը և մշտական բնակչության վայր ընտրելիս նախապատվությունը տալիս են հանրապետության քաղաքներին, Արարատյան դաշտի գյուղատնտեսական գոտու գյուղական համայնքներին, ինչպես նաև արտերկրին<sup>11</sup>: Դրան հիմնականում նպաստում են գյուղական տարածքների խոշորացվող համայնքներում հանրապետության բնակչության թվի նվազեցման միջինից բարձր արձանագրված ցուցանիշները և սոցիալական ոլորտի կազմակերպությունների ցանցի զանգվածային փակմանն ու 1,5–2 անգամ դրանց մատչելիության շառավղի մեծացմանը հանգեցնող՝ գյուղական տարածքներում իրակա-նացվող, այսպես կոչված, «օպտիմալացման» քաղաքականությունը<sup>12</sup>:

<sup>10</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով - 2020, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ armstat.am/am?id=818, էջ 298:

<sup>11</sup> Տե՛ս **Մանասյան Վ.**, Փոքր գյուղական բնակավայրերի վերականգնման հիմնահարցերը, «Էկոնոմիկա», N 9-10, 1991, էջ 38–39:

<sup>12</sup> Ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլի հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետությունում իրականացվող գյուղական բնակավայրերի խոշորացման քաղաքականության պատճառով ոչ միայն վերացան մի սովոր խումբ գյուղական բնակավայրեր (բավական է նշել, որ 1959 թվականին հանրապետության գյուղական բնակավայրերի թիվը հասնում էր 1192 միավորի. մինչև 1987 թ. կրճատվելով՝ հասավ 914-ի), այլև զգալի չափով հողատարածություններ (առավելապես մանրատրվագիծ և անկանոն կառուցվածքի, դեպի վարելահողեր տանող ճանապարհների ոչ բարվոք վիճակի կամ բացակայության ու այլնի պատճառով) դուրս եկան գյուղատնտեսական ցանքաշրջանառությունից (որպես կանոն՝ լեռնային և բարձրլեռնային գոտիներում ինչքան խիտ է գյուղական բնակավայրերի ցանցը, այնքան մեծ են ագրոարտադրական ռեսուրսային ներուժի հիմնավորված օգտագործման հնարավորությունները), որն էլ հանգեցրեց ոչ միայն այդ բնակավայրերից հեռանալուն, այլև բնատարածքային համալիրների խախտմանը և, դրանցով պայմանավորված, սոցիալ-տնտեսական և ագրոէկոլոգիական անցանկալի հետևանքների առաջացմանը (Տե՛ս **Մանասյան Վ.**, Փոքր գյուղական բնակավայրերի վերականգնման հիմնահարցերը, «Էկոնոմիկա», N9-10, 1991, էջ 38):

Աղյուսակ 1

**Լքյալ հողամասերով (դափարկ տներով) անձնական օժանդակ տնտեսությունների և քաղաքացիների այլ անհատական տնտեսությունների տնտեսությունները կշռով ընդհանուր քանակային կազմում հանրապետության մարզերի խմբավորումը (2021 թ. հունվարի 1-ի դրությամբ)**

Տնտեսությունների կատեգորիան	Ընդհանուր քանակային կազմում լքյալ հողամասերի տնտեսությունները կշռով մարզերի խմբերը*				Ընդամենը
	մինչև 5,0%	5,1-10,0%	10,1-20,0%	20,0%-ից ավելի	
Մարզերի քանակը խմբում	5	7	6	6	24
Անձնական օժանդակ և քաղաքացիների այլ անհատական տնտեսություններ	1071 5.3	10056 49.4	7643 37.5	1577 7.8	20347 100
Որից՝ անձնական օժանդակ	2065 10.3	9421 46.9	7950 39.5	661 3.3	20097 100
այլ անհատական տնտեսություններ	607 38.2	190 12.0	355 22.4	435 27.4	1587 100
Այդ թվում՝ քաղաքացիների տնտեսությունները գյուղական բնակավայրերում	116 1.2	2330 24.7	5997 63.7	981 10.4	9424 100
Որից՝ անձնական օժանդակ	5 0.1	2050 20.8	7654 77.8	130 1.3	9839 100
այլ անհատական տնտեսություններ	130 14.4	335 37.2	-	435 48.4	900 100
քաղաքացիների տնտեսությունները քաղաքի շրջակայքում և քաղաքային բնակավայրերում	157 8.3	378 19.9	1366 71.8	-	1901 100
Որից՝ անձնական օժանդակ	119 6.6	378 20.9	1315 72.5	-	1812 100
այլ անհատական տնտեսություններ	105 100	-	-	-	105 100

\* Համարիչում՝ միավորներով, հայտարարում՝ տնտեսություն կշիռը՝ % -ով:  
Հաշվարկել ենք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հարցում-հետազոտական նյութերի խմբավորված վերլուծության հիման վրա:

Շուկայական հարաբերությունները տնտեսության ագրոպարենային համակարգի և հատկապես դրա հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության զարգացման մեջ հանրապետության մարզերն ըստ մրցակցային առավելությունների ու թերությունների բաժանող շուկայական մրցակցության մեխանիզմի ներգրավմամբ միջմարզային ու միջտարածաշրջանային տարբերակումն ավելի ակնառու դարձրին: Ընդ որում, ագրարային հատվածի կառուցվածքում տարբերությունների, բնակչության մտածելակերպի ու պետական գործառնությունների առանձնահատկությունների հետ մեկտեղ, առանձին մարզերում ու տարածաշրջաններում շուկայի նկատմամբ հարմարվողականության տեսակետից զգալի տարբերություններ բացահայտվեցին: Այս համատեքստում

տում, անհրաժեշտ է ստեղծել նոր ենթակառուցվածքներ և ինստիտուցիոնալ միջավայր, որպեսզի հանրապետության համեմատական առավելություններ ունեցող ապրանքատեսակներ արտադրողներին հնարավորություն տրվի մասնագիտանալու արտահանման համար նախատեսված արտադրության մեջ: ՀՀ չոր մերձարևադարձային ագրոլանդշաֆտային գոտու նախալեռնային ցածրադիր դարավանդների սահմանափակ արեալում (հատկապես Մեղրու տարածաշրջանում) այդպիսին կարող է համարվել, օրինակ՝ թզենու, նոնենու, նշենու և այլ ջերմասեր ու շուկայական մեծ պահանջարկ ունեցող մերձարևադարձային արժեքավոր պտուղների արտադրությունը, որոնք միայն յուրահատուկ ագրոլանդշաֆտային գոտու արեալներում են ապահովում պահանջվող որակի շուկայական բարձրարժեք օրգանական արտադրանք<sup>13</sup>:

Սոցիալ-տնտեսական զարգացման, ագրարային հատվածի վարման արդյունավետության և հիմնական պարենամթերքով ինքնաբավության մակարդակի բարձրացման տեսակետից, հանրապետության մարզերի զգալի տարբերակման առկայության պարագայում, ճյուղի տարածքային կազմակերպման մեջ չարդարացված սոցիալ-տնտեսական տարբերություններ ու շեղումներ են պահպանվում: Մյուս կողմից՝ համեմատաբար ոչ մեծ թվով մարզերում, որպես կանոն, ավելի բարենպաստ ագրոկլիմայական պայմաններով, բարձր եկամտաբերությամբ տնտեսությունների կենտրոնացվածությամբ և պարենային ապրանքների ու գյուղատնտեսական հումքի իրացման շուկաներին մոտ տեղաբաշխվածությամբ, տեղի է ունենում սոցիալական, տնտեսական և հատկապես ագրոարտադրական կարողությունների, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների կենտրոնացում (աղյուսակ 2):

Ժամանակակից պայմաններում հանրապետության ագրարային հատվածի տարածքային զարգացումը թեև ոչ հստակ արտահայտված, բայց և այնպես, գյուղատնտեսական արտադրանքի այս կամ այն տեսակի արտադրության համար առանձին մարզերի հարաբերականորեն փոխկապված մասնագիտացում է ներկայացնում: Դրանց ծավալները, ինտենսիվությունը և ապրանքային ու դրամական հոսքերի ուղղությունները հիմնականում պայմանավորված են մի կողմից՝ պահանջարկով ու առաջարկով, մյուս կողմից՝ ճյուղի պետական աջակցության հնարավորություններով ու արդյունավետությամբ, ներքին ագրոպարենային շուկայի առանձին պարենային հատվածամասերի կարգավորումով: Դա փոփոխվում է, նախևառաջ, գյուղատնտեսական արտադրանքի որոշակի տեսակների և այն մարզերում արտադրության հիմնավորված տեղաբաշխման, գոտիական մասնագիտացման և համակենտրոնացման մակարդակի բարձրացման գործընթացների ամբողջական և միաժամանակյա ներգործությամբ ու փոխազդեցությամբ, որտեղ տնտեսական ու սոցիալական և հատկապես ագրոկլիմայական պայմաններն առավել բարենպաստ են դրանց համար:

<sup>13</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020–2030 թթ. ռազմավարություն, էջ 59:

**Մանասյան Վ.**, ՀՀ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման արդյունավետության բարձրացումը հողակտորների մանրաուրվագիծ և անկանոն կառուցվածքի պայմաններում, «Բանբեր ՀՊՏՀ», N 2, 2007, էջ 90, 103:

Աղյուսակ 2

**Առավել բարենպաստ փողադիրքով հայաստանյան 3 մարզերի (Արագածոտն, Արարատ, Արմավիր) փոսակարար կշիռը գյուղատնտեսական արտադրանքի առանձին փոսակների արտադրության մեջ<sup>14</sup>**

Գյուղատնտեսական արտադրանքի փոսակները	2018			2019			2020		
	ընդամենը	3 մարզերը	փոսակարար կշիռը (%)	ընդամենը	3 մարզերը	փոսակարար կշիռը (%)	ընդամենը	3 մարզերը	փոսակարար կշիռը (%)
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ընդամենը (մլրդ դրամ)	892,9	393,6	44,1	853,3	385,6	45,2	833,3	388,5	46,6
Այդ թվում՝ բուսաբուծություն	415,8	258,2	62,1	410,9	254,6	62,0	399,5	262,5	65,7
անասնաբուծություն	477,1	135,4	28,4	442,4	131,0	29,6	433,8	126,0	29,0
Բուսաբուծության արտադրանքը (հազ. փ) հացահատիկ և հատիկաընդեղեն, ընդամենը	337,7	66,5	19,7	198,7	49,8	25,1	246,1	68,5	27,8
կարտոֆիլ	415,1	79,8	19,2	404,1	80,2	19,8	437,2	89,6	20,5
բանջարեղեն	628,2	502,9	80,0	621,6	511,4	82,3	692,8	583,8	84,3
բոստանային մշակաբույսեր	126,8	125,2	98,7	128,0	127,1	99,3	126,6	125,4	99,1
պտուղ և հատապտուղ	343,4	273,5	79,6	290,6	223,9	77,0	274,3	207,4	75,6
խաղող	179,7	163,2	90,8	217,5	201,2	92,5	283,2	261,6	92,4
Իրացվել է գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով, հազ. փ)	190,3	53,1	27,9	188,8	54,9	29,1	189,6	54,4	28,7
Կաթ (հազ. փ)	697,7	169,1	24,2	667,9	160,5	24,0	654,3	153,5	23,5
Ձու (մլն հազ. փ)	726,8	307,1	42,2	720,6	311,4	43,2	754,6	323,9	42,9
Բուրդ (ֆիզիկական քաշով, փ)	1032	457,3	44,3	981,0	441,4	45,0	1048,0	517,8	49,4

« 2016–2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարության համաձայն՝ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ միջմարզային տարբերակման մակարդակների կրճատում և ներմարզային սոցիալ-տնտեսական տարբերությունների նվազեցում ապահովելու համար, մասնավորապես, առաջարկվում է, գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման հաշվին դրանց յուրացման և օգտագործման բնորոշ առանձնահատկությունները, բնակչության խտությունը, ագրոկլիմայական պայմանները, խոշոր քաղաքներից ու արդյունաբերական կենտրոններից հեռացվածությունը հաշվի առնելով, տարաբնակեցման համակարգի կայունությունը բարելավել<sup>15</sup>: Դա իրագործելու համար անհրաժեշտ պայմաններ են համարվում.

<sup>14</sup> Աղյուսակը կազմվել է « փճակագրական կոմիտեի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի տվյալների հիման վրա:

<sup>15</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2016–2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, « Կառավարության 2016 թ. հուլիսի 29-ի նիստի N 29 արձանագրային որոշումը:

- գյուղական համայնքների ու բնակավայրերի բնակչության կյանքի պայմանների բարելավումը, ծառայությունների տարբեր տեսակներով բնակչությանն ու գործարարներին ապահովող գյուղական տարածքների համար, որպես միջհամայնքային սպասարկող կենտրոններ, խոշոր գյուղական համայնքների զարգացմանն աջակցությունը, տարածաշրջանային ու տեղական ճանապարհների՝ մինչև մոտակա միջհամայնքային սպասարկող կենտրոններ հասցնելու հաշվին ցանցի զարգացումը,
- գյուղական տարածքների տրանսպորտային մատչելիության մակարդակի բարձրացումը, հասարակական տրանսպորտի զարգացման խթանումը, ինչպես նաև զբաղվածության բազմազանեցմանն աջակցությունը և գործարարության ոլորտում, այդ թվում ոչ գյուղատնտեսական աշխատանքների ու տնտեսական գործունեության այլ ձևերի զարգացմանը, բնակչության նախաձեռնություններին օժանդակության ընդլայնումը,
- բացառիկ հայկական բրենդներն առաջ շարժելու միջոցով գյուղական տարածքների տնտեսության, այդ թվում՝ հեռանկարային ագրոպարենային համակարգի կենտրոններ համարվող մրցունակության աճը, սպառողական, վարկային և կոոպերացիայի այլ ձևերի, ինչպես նաև ագրոհոլդինգային ու ագրոֆիրմային տիպի խոշոր տնտեսությունների զարգացմանն աջակցությունը, գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի իրացման շուկաներ փոքր ու միջին ապրանքարտադրողների համար մատչելիության մեծացումը, գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների պահեստավորման մասնագիտացված ենթակառուցվածքների զարգացմանն աջակցությունը, դրանց խոր վերամշակման համար նոր կամ կատարելագործված տեխնոլոգիաների ու սարքավորումների արմատավորումը, հողաբարելավման կառույցների զարգացմանն օժանդակությունը, արդյունավետ գյուղատնտեսություն վարելու համար գյուղական տարածքներում չօգտագործվող պիտանի վարելահողերի և բազմամյա տնկարկների՝ գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավումը,
- շրջակա միջավայրն ու բնական լանդշաֆտները պահպանելու և գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության աստիճանը բարձրացնելու, ինչպես նաև տեղաբնիկ հայ ազգաբնակչության ու ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային առանձնահատկություններով պայմանավորված բնապատմական արտադրական փորձը պահպանելու, շուկայական տնտեսության մրցակցային պայմաններին հարմարեցնելու, ժողովրդական ստեղծագործության և մյուս զբաղմունքների պահպանման, վերականգնման ու զարգացման նպատակով օժանդակությունը, զբոսաշրջային ու գյուղական տարածքների համար ենթակառուցվածքներ ապահովող ու ագրո- և էկոզբոսաշրջային ռեսուրսները ներքին ու միջազգային շուկաներ հասցնելու միջոցառումներին աջակցությունը:

Միաժամանակ, գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացմանը նպատակամիտված պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ամրագրող ռազմավարական այդ կարևորագույն փաստաթղթերը պատասխան չեն տալիս գլխավոր հարցին. այնուամենայնիվ, ինչպե՞ս զարգացնել հանրապետության շատ մարզերի ու տարածաշրջանների

բարդ ռելիեֆային պայմաններով և անհավասարաչափ բնակեցված լեռնային տարածքը, քանի որ հիմնական կողմնորոշումը տնտեսության գերակա աճի, այլ ոչ թե հատկապես գյուղական համայնքներում և բնակավայրերում ապրող և աշխատող մարդու ուղղությամբ է: Դա պահանջում է ոչ միայն հանրապետության տարաբնակեցման համակարգի ու տնտեսության տարածքային կազմակերպման կատարելագործում, այդ թվում՝ մարզային ու տարածաշրջանային զարգացման արդյունավետ պետական քաղաքականության վարելու հաշվին, այլև ագրարային հատվածի հիմնավորված տեղաբաշխման ու գոտիական մասնագիտացման առումով մի շարք հայեցակետային դրույթների վերանայում:

Տարածքային զարգացման, մասնավորապես՝ վարչատարածքային միավորների միջև անհամամասնությունները մեղմելու անհրաժեշտությունը (հատկապես համայնքների խոշորացման և փնջերի ձևավորման նախաձեռնությունների իրականացման գործընթացներում), անկասկած, պահանջում է հանրապետության վարչատարածքային բաժանման զգալի փոփոխություններ՝ տնտեսական շրջանացման մեթոդի պատմականորեն հաստատված կատարումն ապահովող գիտական հիմքի վրա: Դա հիմնվելու է ագրոպարենային համակարգի, արտադրության մեջ աշխատանքի տարածքաճյուղային բաժանման առավելությունների օգտագործման, տարբեր գոտիներում գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտադրության նախընտրելի մասնագիտացման ուղղությունների ձևավորման, միջմարզային ապրանքափոխանակության զարգացման, ինչպես նաև հանրապետական ու մարզային մակարդակներում տնտեսավարման ավելի կատարյալ կազմակերպատնտեսական մեխանիզմների գործարկման վրա:

Վերջին հաշվով, սա այն բանի երաշխիքն է դառնալու, որ ամբողջ սոցիալ-տնտեսական կենսագործունեությունը միայն Երևանում և ցածրադիր գոտու մի քանի տնտեսապես զարգացած մարզերում կենտրոնացված չի լինելու: Զարգացումը, քիչ թե շատ, տեղի է ունենալու հանրապետության ամբողջ տարածքում՝ ներառյալ նաև սահմանամերձ, լեռնային ու բարձրլեռնային գոտիներում տեղաբաշխված գյուղական համայնքներն ու բնակավայրերը: Դա թույլ կտա հանրապետության բոլոր մարզերի ագրոարտադրական ռեսուրսային ներուժի օգտագործումն առավելագույնի հասցնել, կասեցնել մայրաքաղաքում և ցածրադիր գոտու մի քանի մարզերում ու տարածաշրջաններում բնակչության ծայրաստիճան կենտրոնացման՝ տարիների ընթացքում ձևավորված միտումները:

Քանի որ հանրապետության լեռնային տարածքում գյուղատնտեսական արտադրանքի առանձին տեսակների արտադրության համար բնական և սոցիալ-տնտեսական համահավասար պայմաններով արտադրական-տարածքային համակարգեր գոյություն չունեն, դրանցից յուրաքանչյուրը ուղղաձիգ լանդշաֆտային գոտիավորման և գյուղատնտեսական արտադրության համար հարմար տարածքների բացահայտմանը կողմնորոշված առանձին գյուղական համայնքներին, մարզերին ու տարածաշրջաններին է ամրակցվում: Այդպիսի հայեցակարգը միանգամայն արդարացված է ոչ միայն տեսական ու մեթոդաբանական դրույթների, այլև միասնականացված մոտեցումները բացառող գործնական դիրքորոշումների տեսակետից: Դա իրական մեծ նախադրյալներ է ունենալու բնականորեն զարգանալու և ավելի մեծ

դրական արդյունքներ ապահովելու համար, երբ գոտիական, ճյուղային և տնտեսական մասնագիտացումն ավելի հստակ է դրսևորվում, միջմարզային ու միջտարածաշրջանային ապրանքափոխանակությունն է ընդարձակվում, միջտնտեսական կոոպերացիան և ագրոարտադրական ինտեգրումն է ընդլայնվում: Ընդ որում, միմյանց հետ առանձին կոոպերացվող տնտեսությունների հարաբերականորեն նեղ մասնագիտացման այդպիսի միավորումների ստեղծումը տնտեսության ագրարային հատվածի արդյունաբերականացմանն են հանգեցնելու:

Հայաստանի տնտեսության ագրարային հատվածը այնպիսի ելակետի է մոտեցել, երբ, կողմնորոշվելով ներդրումային-նորարարական զարգացման մոդելի իրագործման ուղղությամբ, ի վիճակի է ոչ միայն հիմնական պարենամթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակ ապահովել, այլև մանրազանգված պարենային ապրանքների ու գյուղատնտեսական հումք արտահանողի դեր ստանձնել (որպես գերակայություն կդիտարկվեն օրգանական գյուղատնտեսական հումքի վերամշակումը, բարձրորակ ալկոհոլային խմիչքների, հատկապես՝ կոնյակի, հյութերի խտանյութի, տոմատի մածուկի, պահածոների, թարմ ու չոր մրգերի, կաթնամթերքի ու մսամթերքի առանձին տեսակների արտադրության ավելացումը), քաղաքային ու գյուղական բնակչության կենսամակարդակների միջև առկա զգալի շարունակական ճեղքվածքը հաղթահարել, գյուղական տարածքներում արժանավայել ապրելակերպ ապահովել, առավել ևս՝ ավանդական նախատիպարը փոխել. «գյուղական տարածքների մարդկային կապիտալից» դեպի «գյուղատնտեսություն՝ գյուղի բնակիչների համար»:

Այդպիսի քաղաքականության իրականացումը ենթադրում է պետական և տեղական ինքնակառավարման սկզբունքների զուգակցման հիման վրա հանրապետության սոցիալ-տնտեսական միասնության ամրապնդում, ներքին ագրոպարենային շուկայի զարգացում, պարենամթերքների նկատմամբ բնակչության համար մատչելիության հավասար պայմանների ապահովում, տարածքային մրցունակության բարձրացում և մրցակցային առավելությունների առևտրայնացում:

Հայկական գյուղի բնական, սոցիալ-տնտեսական և էթնոմշակութային ներուժը պահպանելու և բազմապատկելու նպատակով այդ ուղղություններն անհրաժեշտ է ներառել հանրապետության գյուղական տարածքների զարգացման հարաբերությունները կարգավորող իրավական դաշտի գերակայություններում, մշակել գյուղական համայնքների և բնակավայրերի սոցիալական բարեկարգման չափորոշիչների համակարգ, որը կողմնորոշիչ կլինի գյուղական տարածքների համաչափ զարգացման պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծրագրերն իրագործելիս:

**Եզրակացություն:** Հանրապետության տարածքային համաչափ զարգացման անհրաժեշտության վերաբերյալ ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք կարևորագույն փաստաթղթեր են ընդունվել, սակայն հանրապետությունում ագրարային հատվածի, դրա տեղի ու դերի, տարածքային կազմակերպման հարցերին շատ քիչ ուշադրություն է դարձվել: Մի շարք պատճառներով ագրարային հատվածի տարածքային համաչափ զարգացման շատ հարցեր պատշաճ հիմնավորում չեն ստացել կամ էլ, լավագույն



դեպքում, հատվածական ու ոչ միանշանակ բնույթ են կրում և, նույնիսկ հանրապետության ինը գյուղատնտեսական գոտիների առումով, բավականաչափ պարզորոշ պատկերացում չեն տալիս բուսաբուծության ու անասնաբուծության ենթաճյուղերի հիմնավորված տեղաբաշխման և տարբեր գյուղատնտեսական գոտիներում նախընտրելի մասնագիտացման ուղղությունների զարգացման մասին: Հանրապետության տարածքային համաչափ զարգացման բազմաթիվ հիմնախնդիրների առկայության պայմաններում դա կարող է բացասաբար անդրադառնալ ագրարային հատվածի հիմնավորված տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման վրա, եթե ժամանակին ագրոպարենային համակարգի հնարավոր զարգացման հաշվառմամբ ճյուղի տարածքային կազմակերպման հայեցակարգի, ռազմավարության և իրականացման պլանի մշակման, ԵԱՏՄ անդամ երկրների գյուղատնտեսական արտադրության հիմնավորված տեղաբաշխման և մասնագիտացման խորացման նպատակով նրանց համատեղ գործողությունների համաձայնեցման միջոցներ ձեռք չառնվեն:

Որպես ներկայիս իրավիճակը հաղթահարելու միջոց առաջարկվում է 100 էկոլոգիական գյուղերի ստեղծման նախագիծ, որի կարևոր պահանջներից է գյուղի աշխատունակ բնակչությանն աշխատանքով ապահովելը: Հիմնական տնտեսական գործունեությունը գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունն է լինելու. դաշտավարությունում՝ բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի և հանրապետության ագրոկլիմայական պայմաններին համապատասխանող հատիկաընդեղեն մշակաբույսերի (հնդկաձավար, ոլոռ, հաճար, և այլն) աճեցման տեխնոլոգիաների յուրացումը: Անհրաժեշտ են պտղի ու խաղողի տեղական և ընտրանքային տեսակների դաշտային հավաքածուներ՝ կոլեկցիոն այգիների հիմնադրման, այլ երկրների գենետիկական բանկերից հայկական ծագում ունեցող նմուշների ձեռքբերման և նոր այգիների հիմնման միջոցով: Անասնաբուծության ճյուղում կաթնամսատու տավարի, իսկ տարածաշրջանային շուկաների պահանջարկի բավարարման առումով առանձնահատուկ կարևորություն է ստանալու նաև մսակաթնաբրդատու ոչխարաբուծության զարգացումը: Անձնական օժանդակ տնտեսություններում այծերի, խոզերի, թռչունների և բանող ու սպորտային ձիերի գլխաքանակն է ավելանալու, քանի որ անգամ եկամտաբերության ցածր մակարդակի պարագայում դրանք ապահովում են կայուն զբաղվածություն, դրամական հոսքերի սեզոնայնության մեղմացում, թարմ և վերամշակման անասնապահական մթերքների նկատմամբ ներտնտեսական կարիքների բավարարում և բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների առկայություն: Կարևոր գերակայություն է նաև մեղվաբուծության ու ձկնաբուծության ոլորտների զարգացումը՝ պետական աջակցությունը մեղրի ու ձկան արտահանման մեխանիզմների մատչելիության և շուկայահանման դժվարությունների հաղթահարման ուղղությամբ:

Գյուղատնտեսական արտադրության մեջ չպետք է օգտագործվի ծանր տեխնիկա՝ մեծածավալ տրակտորներ ու կոմբայններ, ինչպես նաև հանքային պարարտանյութեր ու թունաքիմիկատներ: Դաշտային և տրանսպորտային աշխատանքները նպատակահարմար է փոքրածավալ մեքենաների օգնությամբ կատարել՝ առավելապես էլեկտրաքարշ մեքենաներով կամ ձիաուժով աշխատող:

Ագրոպարենային համակարգի երրորդ ոլորտի վերամշակող ճյուղերից զարգացում են ստանալու տավարի, ոչխարի, խոզի և թռչնի մսի, կաթի, բանջարանոցային մշակաբույսերի, մրգերի ու հատապտուղների, մեղրի ու մեղրամոմի, բուսական յուղերի և գյուղատնտեսական թափոնների վերամշակումը: Ալպիական արոտների բարելավման և նպատակային օգտագործման համակարգի ներդրման միջոցով շվեյցարական պանիրների և վերամշակված մսամթերքի արտադրության ու արտահանման ծավալներն են ավելացվելու: Համապատասխանորեն՝ ստեղծվելու են պահեստային ու սառնարանային տնտեսություններ, ինչպես նաև զանազան արհեստանոցներ: Կարգաձևան արտահանման ուղղվածություն ունեցող թեթև արդյունաբերության ավանդական ճյուղերը (գորգագործություն, կոշիկի և հագուստի արտադրություն), դրանց հիման վրա կավելանա բրդի և կաշվի պահանջարկը:

Այդպիսի պատկերացմամբ կազմակերպված յուրաքանչյուր էկոլոգիական գյուղում, միջին հաշվով, 750–800 մարդ է ապրելու: Նրանց համայնքային սեփականության մեջ մոտավորապես 1000–1300 հա գյուղատնտեսական, անտառային, ջրային և այլ հողատեսքեր են գտնվելու: Համապատասխանաբար՝ էկոլոգիական գյուղերի բնակչության ընդհանուր թիվը հանրապետությունում կազմվելու է 75–80 հազ. մարդ, որոնք արտադրության հանրային բնույթի և աշխատանքի կոլեկտիվ սկզբունքով կազմակերպման հիման վրա մասնավորապես 90–100 հազ. հա բերրի գյուղատնտեսական հողեր են մշակելու:

Կարծում ենք՝ ագրոպարենային համակարգի գիտականորեն հիմնավորված զարգացումը, նոր էկոլոգասոցիալական կառուցվածքի բնորոշումով՝ էկոլոգիական գյուղեր ստեղծելը այժմեական պայմաններում ունակ է հանրապետության ողջ ագրոպարենային համակարգի նոր՝ վերստին զարգացում ապահովող հզոր շրգեքարշը դառնալ:

Անշուշտ, դրանք ագրարային հատվածի տարածքային կազմակերպման և զարգացման գլխավոր ուղղություններն են, որոնք հատուկ են միջմարզային ու միջտարածաշրջանային ինտեգրման խթանմանն ու զարգացմանը և կարող են տնտեսական, սոցիալական ու էկոլոգիական խնդիրների լուծման հիմք հանդիսանալ: Մասնավորապես՝ սոցիալական կլաստերների օգտագործմամբ գյուղական տարածքների համաչափ զարգացման նկատմամբ ռազմավարական, համակարգային մոտեցումը կարող է գյուղական բնակչության միջավայրում հայրենի գյուղի նկատմամբ կապվածությունն ու այնտեղ մշտապես բնակվելու ցանկությունը հաստատուն դարձնել, այստեղ սեփական ճանապարհը գտնելու անհրաժեշտություն ստեղծել:

### Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգով նախատեսված տարածքային զարգացման միջոցառումների ծրագրերը կատարելու մասին: Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 9 (883), 2012:
2. Հայաստանի Հանրապետության 2016–2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, [mtad.am/hy/razmavarutyun/](http://mtad.am/hy/razmavarutyun/):

3. ՀՀ տարածքային զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները /2. Թաղևոսյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2015, («Ամբերդ» մատենաշար):
4. Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին: ՀՀ Կառավարության 4 նոյեմբերի 2010 թ. N 1476-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 60 (794), 2010:
5. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020–2030 թթ. ռազմավարություն, <http://mineconomy.am/page/1267>:
6. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով – 2020, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020: ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ [armstat.am/am/?nid=81&bid=Labr.syear=Ssubmit](http://armstat.am/am/?nid=81&bid=Labr.syear=Ssubmit).
7. Թաղևոսյան Զ., Հայրապետյան Ա., Շիրակի մարզի համայնքային հիմնախնդիրների առաջնային հետազոտության արդյունքների վերլուծություն, «Բանբեր ՀՊՏՀ», N2, 2020, էջ 49-73:
8. Մանասյան Վ., Փոքր գյուղական բնակավայրերի վերականգնման հիմնահարցերը, «Էկոնոմիկա», N9–10, 1991:
9. Մանասյան Վ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման շրջանացման մեթոդաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2 (662), 2021:
10. Մանասյան Վ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման արդյունավետության բարձրացումը հողակտորների մանրաուրվագիծ և անկանոն կառուցվածքի պայմաններում, «Բանբեր ՀՊՏՀ», N 2, 2007:
11. Маркс К., Капитал. Критика политической экономии. Т. 1, кн. 1. Процесс производства капитала. М.: Политиздат, 1988.
12. Карпачев С., Гектары оптимизмы. Устраняясь от поддержки сельхозпроизводителей, государство плодит перекупщиков // Военнопромышленный курьер ВПК, N 2, 2020.
13. Саушкин Ю.Г., Экономическая география: история, теория, методы, практика. М.: Мысль, 1973.
14. Marshall A., Principles of Economics. London, 1910.

## ВОЛОДЯ МАНАСЯН

Доцент кафедры экономики природопользования АГЭУ,  
кандидат географических наук

***Рациональное размещение и поясная специализация аграрного сектора экономики РА в контексте его сбалансированного территориального развития.*** – В статье рассмотрено не только большое разнообразие природных и экономических условий, создаваемых на небольших территориях в условиях сурового рельефа и сильной фрагментации поверхности, но и пространственное развитие многоотраслевой экономики, различные макроэкономические факторы. В

этом контексте дальнейшее развитие сельских территорий возможно только после кардинального изменения бюджетной политики государства по части финансовой поддержки последних, в результате развития сотрудничества между государственным и частным сектором за счет более активного государственного регулирования этих вопросов. К сожалению, пока еще в сельской местности преобладают деструктивные демографические процессы, о чем свидетельствует статистика сокращения сельского населения и увеличения числа заброшенных сельских территорий. Ситуация усугубляется еще и тем, что в важнейших документах, имеющих стратегическое значение для сбалансированного территориального развития республики, принятых в последнее время, вопросы рационального размещения аграрного и смежных секторов не были удостоены должного внимания. Если своевременно не принять меры по разработке концепций, стратегии и схемы территориальной организации аграрного сектора с учетом возможного развития третьего сектора агропродовольственной системы, координации совместных действий государств-членов ЕАЭС по рациональному размещению и специализации их агропромышленного производства, это негативно отразится на сбалансированном развитии отрасли и сельских территорий.

**Ключевые слова:** рациональное размещение, поясная специализация, сбалансированное территориальное развитие, аграрный сектор, сельские территории, стратегия, государственная поддержка.

JEL: Q15, R12

DOI: 10.52174/1829-0280\_2022.1-114

## VOLODYA MANASYAN

Associate Professor of the Chair of Environmental Economics of ASUE,  
PhD in Geographical Sciences

***Placement and Specialization of the Agrarian Sector of the RA Economy in the Context of its Balanced Territorial Development.*** – The paper clarifies not only the great diversity of natural and economic conditions created in small areas in conditions of severe relief and severe surface fragmentation, but also the spatial development of multi-sectoral economy, many macroeconomic factors: In this context, the further development of rural areas is possible only after a radical change in the budget policy of the state in terms of their financial support, after the development of public-private partnership through more active state regulation of these issues. So far, destructive demographic processes are prevalent in the village. It is impossible to disagree with them, as evidenced by statistics on

the decline of the rural population and the increase of abandoned rural areas. The situation is aggravated by the fact that the most important documents of strategic importance for the balanced territorial development of the republic, which have been adopted recently, have not received the required level of clarification. If the possible development of the third sector of the agri-food system is not taken into account in time for the development of the concept, strategy and scheme of the territorial organization of the agrarian sector, considering the coordination of joint actions for the justified placement and specialization of agri-food production of the EEU member states, it will negatively influence the balanced development of rural areas.

**Keywords:** *reasonable location, zoning, balanced territorial development, agrarian sector, rural areas, strategy, state support.*

JEL: Q15, R12

DOI: 10.52174/1829-0280\_2022.1-114